

# Խաչատուր Աբովյան

## Պարապ վախտի խաղալիք

### Բարդին (չինարին) ու վազը

Բարդին մեր վազին ոնամիշ արեց:
«Ի՞նչ ես կուչ եկել»:— Նա նրան ասեց.
«Ես էլ որ չըլիմ, ի՞նչ կըլի քո բանն,
Քեզ որ իմ տակիս շվաք տեղ չտամ:
Ինձանով որ դու չգաս, փաթութվիս,
Ի՞նչ կըլի քո հալն, էլ ի՞նչպես կապրիս:
Բարակ քամին էլ հոգիդ կհանի,
Էդպես սև օրը՝ Աստված տա՝ չըլի:
Ինձ մտիկ արա՛, տե՛ս, ո՞ւր եմ հասել,
Ինձ պես բոյ արա՛, որ ամեն մարդ էլ
Մտիկ անելիս քեզ՝ խելքը գնա,
Շլինք ծռելով՝ ո՞վ պատիվ կտա:
Ոչ ցից ա ինձ պետք, ո՛չ գերան, ձողի,
Մեկ տուտս գետնումն, մեկը երկնքի
Ամպի, անձրևի, քամու առաջին:
Ճխկներս վեր քաշած, որ սուր ու կացին
Չի հասնի, դիպչի իմ մեջքին, ծերին:
Բայց ձեր խեղճ սոյը հենց դուս է գալիս,
Շուտով շլինքը կախ անում, թեքվում,
Ոտի տակ ընկնում, մեկ հով դիպչելիս,
Գետնին չոքըչոք դես ու դեն ընկնում:

Ափսո՛ս էդ պտղին, որ դուք եք տալիս,
Մեզ է՛դ սազ կգար, էս բարձր ծերիս»:—
«Ի՞նչ եմ անում էս՝ հաստ քոքն ու բոյը,
Շատ բարձրանանք էլ՝ էլի մեր սոյը
Էն սիրտը չունի, գլուխ բարձրացնի»:
Պատասխան տվեց վազը սիրելի:
«Ո՞ւր թողանք մեր քաղցր պտուղն ու ճուխկը,
Էլ ո՞վ կբանա մարդի տխուր միտքը:
Էլ ո՞վ էն ազնիվ, էն սուրբ բաժակը
Կտա, որ հիշեն մեռլի հիշատակը:
Որ մենք էլ ուզենք՝ մեր պատվի խաթեր
Քեզ պես բարձրացնել տերև ու ճխկներ:
Ղորդ ա՝ քեզանով մենք փաթաթվում ենք
Բազի անգամ ու շվաքդ տեսնում ենք:
Բաս է՞ն էլ, ասա՝ որ մեր բարի տերը
Չունենա էսքան մեր տված խերը,
Քեզ մեկ օր էլա՝ բաղում չի պահիլ:
Լավ չի՞՝ բարեկա՛մ՝ էսպես զրից անիլ:
Ինձ որ պահում են, փորում տակս, ջրում,
Ի՞նչքան ա քեզ խեր սրանից հասնում:
Ինչքան սիրտդ ուզի, էնքան բարձրացի՛ր,
Մի՛ հպարտանար, մեր ղադրն իմացի՛ր:
Մենք էլ որ պտուղ չտանք՝ քեզ նման.
Մեր նյութն ու ղվաթը չկորցնենք էսքան,
Ո՛չ կըկռանանք, ո՛չ կըցածանանք,
Ո՛չ կբարակինք, ու կհաստանանք:
Բանից վախեցողն ու փորի գերին
Էդպես կգիրանան, երկինքն կհասնին»:—
Երկար բոյիցը, ու հաստ մեջքիցը
Ի՞նչ խեր դուս կգա, կամ մեծ գլխիցը:
Պտղատու մարդը ազնիվ վազի նման
Պետք է խոնարհի, որ լինի պիտան:
Բայց ա՜խ՝ բարդի մարդն մեկ շվաք տալիս՝

Յա բաղի վախտ էլ քիչ մոտենալիս,
Էնպես է կարծում, թե իր պահածն ա
Երկիր ու աշխարք, ու գոռոզանա: